ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Երևան, 19 ապրիլի 2022թ.

Մենք՝ ներքոստորագրյալներս,

ՀՀ արդարադատության նախարարությունն ի դեմս նախարար Կարեն Անդրեասյանի, որը գործում է «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 12-րդ մասով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 704-Լ որոշման հավելվածի 18-րդ կետով իրեն վերապահված իրավասությունների հիման վրա,

ՀՀ Ազգային ժողովի Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովն ի դեմս նախագահ Միսակ Գաբրիելյանի, որը գործում է «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքով իրեն վերապահված իրավասությունների հիման վրա,

Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն ի դեմս նախագահ Աշոտ Մելիքյանի, որը գործում է լրագրողական 10 հասարակական կազմակերպությունների (Երևանի մամուլի ակումբ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոն, Լրագրողների «Ասպարեզ» ակումբ, Ինֆորմացիայի ազատության կենտրոն, «Հանուն հավասար իրավունքների կրթական կենտրոն» ՀԿ, Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ - Հայաստան, Հանրային լրագրության ակումբ, «Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ, «Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» ՀԿ, Գորիսի մամուլի ակումբ) կողմից տրված լիազորագրի հիման վրա՝

հաշվի առնելով Հայաստանի մեդիա ոլորտի զարգացման համապարփակ քաղաքականության մշակման կարևորությունը, լրատվական դաշտը կարգավորող ՀՀ օրենսդրությունը բարեփոխելու, ԶԼՄ-ների ինքնակարգավորման համակարգը զարգացնելու, ժամանակակից պահանջներին համապատասխանեցնելու և այդ գործընթացներում միջազգային լավագույն փորձը ներդնելու անհրաժեշտությունը,

պատրաստակամություն հայտնելով նշված ուղղություններով առաջընթաց ապահովելու համար միավորել օրենսդիր և գործադիր իշխանությունների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության՝ լրագրության ոլորտում մասնագիտացված կառույցների (այսուհետ միասին՝ «Կողմեր») ջանքերը՝ ստորագրեցին համագործակցության սույն Հուշագիրը հետևյալի մասին.

1. Համագործակցության նպատակները

Սույն Հուշագրի շրջանակներում նախատեսվող համագործակցության հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում մեդիա ոլորտի զարգացման քաղաքականության արդիականացումն ու լրատվամիջոցների գործունեությունը կարգավորող օրենսդրության բարեփոխումն է՝ ժամանակակից մարտահրավերներին և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների առաջընթացի նոր պայմաններին համապատասխան, միջազգային լավագույն փորձի և նորմերի կիրառմամբ: Համատեղ ջանքերով իրականացվելիք բարեփոխումները նաև միտված են լինելու երկրում տեղեկատվական դաշտի առողջացմանը, որակյալ լրագրության խրախուսմանը, ապատեղեկատվության, ատելության խոսքի, բռնության քարոզի նվազեցմանը:

2. Համագործակցության առարկան և ձևաչափը

2.1. Սույն Հուշագրի շրջանակներում Կողմերը համաձայնում են Համագործակցություն իրականացնել հետևյալ ուղղություններով՝

2.1.1. տեղեկատվական ոլորտի և մեդիայի զարգացման համապարփակ քաղաքականության մշակում, քննարկում և ընդունում (որի բաղկացուցիչ մասը պետք է լինի նաև տեղեկատվական անվտանգության հայեցակարգը),

2.1.2. զանգվածային լրատվության միջոցների (ԶԼՄ) գործունեությունը կարգավորող օրենսդրության բարեփոխումների հայեցակարգի (այսուհետ՝ Հայեցակարգ) մշակում, քննարկում և հաստատում,

2.1.3. վերոհիշյալ հայեցակարգից բխող նոր օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի պատրաստում, քննարկում և ներկայացում Ազգային ժողով:

2.2. Մեդիայի զարգացման վերաբերյալ պատկերացումներն իմի բերելու, իրավական խնդիրների քննարկումների և օպտիմալ լուծումներ առաջադրելու հիման վրա համատեղ մշակած տեղեկատվական ոլորտի զարգացման համապարփակ քաղաքականության և ԶԼՄ-ների գործունեությունը կարգավորող օրենսդրության բարեփոխումների վերաբերյալ մշակվելիք հայեցակարգը Կողմերն ընդունում են որպես լրատվական դաշտում կիրառվող սկզբունքների ամբողջություն, որոնց հիման վրա հետագայում կմշակվեն նոր ռազմավարական ծրագրեր, օրենքներ և այլ նորմատիվ-իրավական ակտերի նախագծեր:

2.3. Մինչ Հայեցակարգի մշակման ավարտը, Արդարադատության նախարարությունը և Ազգային ժողովի Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը պարտավորվում են համապատասխան նախաձեռնությունների շրջանակներում ապահովել ներառական խորհրդատվական գործընթաց շահառուների, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության և փորձագիտական հանրության մասնակցությամբ, կիրառել որոշումների կայացման համար Եվրոպայի Խորհրդի կողմից մշակված հանրային մեխանիզմները: Հուշագրի

կողմ հանդիսացող կազմակերպությունները պարտավորվում են կազմակերպել քննարկումներ ոլորտի ներկայացուցիչների հետ, հավաքել, ամփոփել և համակարգված կերպով ներկայացնել առաջարկություններ, անհրաժեշտության դեպքում՝ ամբողջական նախագծեր՝ ներգրավելով տեղական և միջազգային փորձագետներ: Եթե Կողմերն իրենց լիազորություններն իրականացնելիս տեղեկանում են Հուշագրի առարկային առնչվող օրենսդրական և այլ նախաձեռնությունների մասին, ապա դրանց հեղինակներին իրազեկում են Հուշագրի և դրանից բխող գործընթացների մասին:

2.4. Բացառիկ դեպքերում, երբ մեդիա ոլորտին վերաբերող օրենսդրական փոփոխությունները և/կամ լրացումները անհետաձգելի կհամարվեն, Արդարադատության նախարարությունը և Ազգային ժողովի Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը պարտավորվում են տեղեկացնել դրանց մասին Հուշագրի մյուս կողմերին, քննարկումներ անցկացնել դրանց վերաբերյալ, հաշվի առնել դիտողություններն ու առաջարկությունները և ապահովել շահագրգիռ կազմակերպությունների մասնակցությունը հետագա գործընթացում:

2.5. Հուշագրի 2.3-րդ կետում նշված համագործակցության ձևաչափը Կողմերը հետևողականորեն կիրառելու են նաև Հայեցակարգի, ապա նաև՝ նոր օրենսդրական նախագծերի մշակման և քննարկման ներկայացնելու գործընթացներում:

3. Համագործակցության համակարգումը

3.1. Հուշագրին վերաբերող հարցերի շուրջ արդյունավետ համագործակցության նպատակով համակարգումը իրականացնում են Կողմերի լիազորված ներկայացուցիչները: Համատեղ միջոցառումներ կամ գործնական հանդիպումներ կազմակերպելու և այլ տեխնիկական հարցեր լուծելու համար Կողմերը նշանակում են մեկական պատասխանատու, որոնք կատարված կամ կատարվելիք աշխատանքների մասին զեկուցում են անմիջապես սույն Հուշագիրը ստորագրողներին կամ նրանց կողմից լիազորված ներկայացուցիչներին:

3.2. Կողմերը հանդիպում են ըստ անհրաժեշտության՝ սույն Հուշագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների արդյունքները քննարկելու, գնահատելու և հետագա համագործակցությունը ծրագրելու նպատակով:

4. Հուշագրի ուժի մեջ մտնելը և դադարեցումը

4.1. Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրելու պահից և գործում է անժամկետ:

4.2. Յուրաքանչյուր Կողմ կարող է միակողմանի դադարեցնել համագործակցությունը՝ այդ մասին առնվազն մեկ ամիս առաջ գրավոր տեղեկացնելով մյուս Կողմերին և նշելով

այդ որոշման պատճառը: Հուշագիրը կարող է նաև դադարեցվել (լուծվել) կամ փոփոխվել Կողմերի գրավոր համաձայնությամբ:

5. Այլ դրույթներ

5.1. Հուշագիրը չի սահմանափակում Կողմերի համագործակցությունը այլ կազմակերպությունների/կառույցների և համապատասխան շահագրգիռ անձանց հետ, ինչպես նաև տեղեկատվության ոլորտին առնչվող այլ հարցերի շուրջ:

5.2. Սույն Հուշագիրը Կողմերի համար որևէ ֆինանսական կամ այլ գույքային պարտավորություններ չի ստեղծում, քաղաքացիական օրենսդրության իմաստով չի հանդիսանում պայմանագիր կամ այլ գործարք և Կողմերի համար չի հանգեցնում քաղաքացիական իրավական հետևանքների: Կողմերը գործում են բարեխղճության, բարեվարքության և բարոյական պարտավորության հիմքով:

5.3. Սույն Հուշագիրը կազմված է 3 հավասարազոր օրինակներից՝ հայերեն լեզվով, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

5.4. Սույն Հուշագիրը ստորագրվել է 2022 թվականի ապրիլի 19-ին:

6. Կողմերի ստորագրությունները

Սիսակ Գաբրիելյան ՀՀ ԱԺ ԳԿՄՄԵՍ մշտական հանձնաժողովի նախագահ	Երանուհի Թումանյանց ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ	Աշոտ Մելիքյան Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ